 \quad \left| \begin{array}{c} 18 \\ 211 \end{array} \right.$$

Զանազանութիւն վերջին համառօտ լուծման և
առաջին մանրամասն լուծման մէջ այն է, որ վեր-
ջին լուծման մէջը զրուում են միայն նշանական
թուանշանները և զրոյքներն մոքուլ խմացուած են
լինում :

Ծանօթութիւն . Եթէ պահանջուում ըստ բա-
ժանել զրոյիւ վերջացած թիւն թիւուն 10, պէտք է
միայն ջնջել զրոյ . որովհետեւ այն ժամանակը ա-
մէն մէկ թուանշանի նշանակութիւնն կընուազի 40

անդամ . ուստի և բոլոր թիւն կնուազի 10 անդամ :

$$\begin{array}{r} \text{Օրինակներ} \cdot 720 : 10 = 72 \\ 1450 : 10 = 145 . \end{array}$$

Բաժանումն այն բաղադրական թիւերու , որոնք կրացարուին շատ թուանշաններով :

Բաժանումն եռանշան կամ բազմանշան թիւերու վերայ կլինի վերոյիշեալ կարգաւ :

$$\text{Օրինակ } 1 \cdot 72750 \text{ բաժանել } \text{թիւով } 125 .$$

$$\begin{array}{r|l} 72750 & 125 \\ \hline 625 & 582 \\ \hline 1025 & \\ \hline 1000 & \\ \hline 250 & \\ \hline 250 & \end{array}$$

$$\text{Օրինակ } 2 \cdot 38,054,530 \text{ բաժանել } \text{թուով} \\ 3779$$

$$\begin{array}{r|l} 38,054,530 & 3779 \\ \hline 3779 & 10,070 \\ \hline 26,453 & \\ \hline 26,453 & \end{array}$$

Օրինակ 3 . Կիցնուք թէ մէկ քաղաքի հեռարկութիւնը միս քաղաքին 13,055 մղոն է , և ճանապարհորդն ամէն օր անցնում է 35 մղոն , իմա-

ցիր , քանի օրուան մէջ կանցնի նա յիշեա է հեռաւ-
որովթիւնն

| | |
|--------|-----|
| 13,055 | 35 |
| 105 | 373 |
| 255 | |
| 245 | |
| 105 | |
| 105 | |

Պատասխանի 373 օրուան մէջ

Ծանօթովթիւն . Եթէ սլահանջուռամ ըլի զրոյքներով վերջայած թիւերն բաժանել թիւերով
100 , 1000 և այլն՝ պիտք է ջնջել բաժանելի թուոյ
աջ կողմէն դրուած 2 , 3 և այլն զրոյքները . սորա
սլահանջառն այն է , որ այն ժամանակը ամէն մէկ
թուանշանի նշանակութիւնն ինտուղի 100 անգամ ,
1000 անգամ և այլն :

Հասարակ կանոններ ամրապնդական թիւերու
բաժանման վերայ

Ա . Մեծ թիւն փոքր թուոյ վերայ բաժանելու-
համար՝ պիտք է նախ՝ զրել բաժանելի թիւն , չետոյ
բաժանարարն , և քաշել նորանց մէջ դիմ (խաղ)
վերջառէս բաժանարարի տակը ևս քաշել դիմ և
այս դժի տակը զբել քանորդն :

Բ . Քանորդի առաջին թուանշանն դաշնելու-
համար՝ պիտք է վեր առնել բաժանելի թուոյ մէջ
այնքան նշաններ , որ բաժանարարն ուղարկնակուի

այն նշաններով բայցարուստ թուոյ մէջ . սորանից յևոյ պէտք է խմանալ թէ՝ քանի անդամ բաժանաւարն սկարունակուում է բաժաննելի թիւէն վեր սունուած մասունքների մէջ , եւ սուայտ թիւն , կամ թուանշանն զրել քանորդի համար նշանակուած տեղը :

Դ . Բաժանարարն պէտք է բազմազատելիլ ըստայած քանորդի թուանշանաւ , արտադրեալն զըմել բաժաննելի թիւէն վեր առնուած մասունքի տակը եւ հանել :

Ե . Քանորդի երկրորդ թուանշանն գտանելու համար պէտք է մնացորդին աջ կողմէն աւելացնել յաջորդ թուանշանն բաժաննելի թուոյն եւ շարունակել բաժանումն վերոցիշեալ կարդաւ :

Ը . Այս եղանակաւ կը շարունակուի բաժանումն մինչև մնացորդի աջ կողմէն կլողուի վերջին թուանըշանն բաժաննելի թուոյն :

Ամբողջական թիւերու բաժանման օրինակներ :

1 . բաժաննել 427,600 թիւովն 40 :

2 . բաժաննել 644,760 թիւովն 45 :

3 . բաժաննել 771,046 թիւովն 82 :

4 . բաժաննել 491,400 թիւովն 600 :

5 . բաժաննել 1,143,936 թիւովն 108 :

6 . բաժաննել 4,764,250 թիւովն 475 :

7 . բաժաննել 1,276,476 թիւովն 876 :

8. բաժանել 27,945,000 թիով 9000
9. բաժանել 879,230,036 թիով 4716 :
10. բաժանել 2762,761,000 թիով 276,217 :
11. բաժանել 68,492,176 թիով 14,552 :
12. բաժանել 1607,448, 649 թիով 40,093 :
13. Գայիք այնպիսի թիւ, որ եթէ կրկնուի 55
անգամ՝ արտադրել թիւն 156,970 :
14. Որպիսի թիւով պէտք է բաղմակելու թիւն
256, որ սահցով արտադրեալն 17,920 .
15. Որպիսի թիւով պէտք է բաղմակակելուի
թիւն 54, որ սահցով արտադրեալն 63,990 :
16. Բաժանեան 27,060 մանէթ 66 հուասոր մա-
սոնքներու և խմացիք, որքան կլինի ամէն մէկ ման :
17. Մարդոյ մէկը կտմենում է 27 օրուան մէջ
անց կենալ 1053 մլոն . Խմացիք քանի մլոն պէտք է
անց կենալ նա մէկ օրուան մէջ . ղիցուք թէ ամէն
օր պէտք է անց կենալ մի և նոյն հեռաւորութիւն :
18. Գետքուրդ քաղաքէն մինչեւ յԱշտարիսան
կայ 2100 մլոն : Խմացիք ճանապարհորդն քանի օր
կմնայ ճանապարհի մէջ , եթէ ամէն օր անց կենալ
նու 35 մլոն :
19. Վաճառականի մէկը դնեց 128 փոթ (պոխ)
շոքար 4992 մանէթի : Խմացիք քանի մանէթ ար-
ժէ այն շոքարի ամէն մէկ փոթն :
20. Մշտիներուն տոին մէկ ամսական ոռօնիկ
6162 մանէթ . ղիցուք թէ այն մշտիներէն ամէն

մէլը սահնում էր ամենայն ամիս 13 մանեթ . Խմացիք նորանց թիւն , այսինքն՝ խմացիք որ քան մշտկ կային :

21. Չորս վաճառական մակողիկ բաժանեցին իրանց մէջ 200 մանեթ . առաջին վաճառականն ըստայաւ 2 մասն , երկրորդն՝ 5 մասն . Երրորդն՝ 6 մասն , իսկ չորրորդն՝ 7 մասն : Խմացիք քանի մանեթ ստայաւ այն վաճառականներէն ամէն մէլը :

Վերը զլուած օրինակներու պատասխանները :

| | |
|-----|------------------------------|
| 1. | 10,690 . |
| 2. | 14,328 . |
| 3. | 9403 . |
| 4. | 819 . |
| 5. | 10,592 . |
| 6. | 10,030 . |
| 7. | 1457 , և մնացորդն 144 . |
| 8. | 3105 . |
| 9. | 186,435 , և մնացորդն 2576 . |
| 10. | 10,002 , և մնացորդն 38,566 . |
| 11. | 4706 , և մնացորդն 10,464 . |
| 12. | 40,093 . |
| 13. | 2854 . |
| 14. | 70 . |
| 15. | 1185 . |

| | | |
|-----|-----|---------|
| 16. | 410 | մանէթ . |
| 17. | 39 | մղոն . |
| 18. | 60 | օր . |
| 19. | 39 | մանէթ . |
| 20. | 474 | մշակ . |

21. Այս խնդիրը վճռելու համար պետք է նշաններն , որոնցով որ բացարձած են մասոնքներն հաւաքել եւ նորանց զումարով ըստ բաժանել թիւն 200 , յևոյ քանորդն բաղմասատկել առանձին մասոնքներու վերայ եւ նորանց արտադրեալ թիւերն ցոյց կը տառ թէ՝ որքան մանէթ առաջաւ այն վաճառականներէն ամէն մէկը , դորօրինակ .

| | |
|-----|----|
| 200 | 20 |
| 20 | 10 |

| |
|---|
| 10 բաղմասատկենք թիւովն 2՝ կտացովի առաջին վաճառականի մասն այսինքն 20 մանէթ . Եթէ բաղմասատկենք թիւովն 5՝ կտացովի երկրորդ վաճառականի մասն , այսինքն՝ 50 մանէթ . Եթէ բաղմասատկենք թիւովն 6՝ կտացովի երրորդ վաճառականի մասն , այսինքն՝ 60 մանէթ , եւ վերջապէս եթէ բաղմասատկենք թիւովն 7՝ կտացովի չորրորդ վաճառականի մասն , այսինքն 70 մանէթ . ուստի առաջին վաճառականի մասն = 20 մանէթ . Երկրորդ վաճառականի = 50 — Երրորդ վաճառականի = 60 — չորրորդ վաճառականի = 70 — |
|---|

Այս օրինակի ստուգով թիւնն իլինի յաւելմամբ :

Գլուխ Բ.

բազմապատկռթեան և բաժանման սույն-
թեան վերայ:

Բազմապատկռթեան սույնթիոն,
(Խօտերք սպոյելու)։

Որովհեամ բազմապատկելի թիւն պարոնակու-
ում է արտադրեալ թուոյ մէջ այնքան անդամ , որ-
քան միութիւն կայ բազմապատկելիչ թուոյ մէջ՝ նորա
համար բազմապատկռթեան վճիռն կէինի ուղիղ այն
ժամանակը , երբոր արտադրեալն կրածանուի բազմա-
պատկելի թուոյ վերայ և կտացուի քանորդն համ-
ար բազմապատկելիչ թուոյն :

Օրինակ . 413 բազմապատկել թիւով 73 :

| | |
|--------|-----|
| | 413 |
| | 73 |
| 1239 | |
| 2891 | |
| 30,149 | 413 |
| 2891 | 73 |
| 1239 | |
| 1239 | |

իսկ եթէ արտադրեալն բաժանուի բաժանարար
թուոյ վերայ՝ քանորդն պաէքը է լինի հաւասար բա-
ժանելի թուոյն :

Վերը տեսանք որ $413 \times 73 = 30,149$, ե-
թէ $30,149$ բաժանենք թուովն 73՝

$$\begin{array}{r} 30,149 \\ \hline 73 \\ \hline 292 \\ \hline 94 \\ \hline 73 \\ \hline 219 \\ \hline 219 \\ \hline \end{array}$$

կստացամի բաժանելի թիւն 413 ,

բաժանման ստոդոթեան համար :

(ՊօԵրկա ՃԵլենիա).

Վերը խօսեցանք թէ բաժանելի թիւն հաւասար է
բաժանարարին \times քանորդիւ . կամ հաւասար է քա-
նորդին \times բաժանարար թուովն : Եստույ կը հետեւի
որ եթէ քանորդն բաղմապատկուի բաժանելի թուովն՝
սլէտք է պարունակել, որ վճիռն չէ սիսալ, կամ ան-
կանոն :

$$\begin{array}{r|l}
 31,605 & 105 \\
 \hline
 315 & \quad\quad\quad 301 \\
 \hline
 & 105 \\
 & 105 \\
 \hline
 & " " "
 \end{array}$$

$$\begin{array}{r|l}
 & 301 \\
 & \times 105 \\
 \hline
 & 1505 \\
 & 301 \\
 \hline
 & 31,605.
 \end{array}$$

Եթե բաժանման վճռելու ժամանակը պատահի մը-
նացորդ , այս մնացորդն պէտք է աւելացնես .քանոր-
դի վերայ եւ թէ դումարն լինի հաւասար բաժանելի
թուոյն պէտք է պարունակիլ , որ վճիռն ուղիղ է :

$$\begin{array}{r|l}
 01131 & 145 \\
 \hline
 290 & \quad\quad\quad 288 \\
 \hline
 & 1279 \\
 & 1160 \\
 \hline
 & 1193 \\
 & 1160 \\
 \hline
 & 33
 \end{array}$$

288

X 145

1440

1152

288

41,760

33

41,793

Գլուխ թ.

Թիւերաւ համեմատութիւնն վերայ :

Վերը խօսեցանք թէ մէկ թիւն երբոր համեմատենք միւս թուոյ հետ՝ կիսմացուի թէ քանի միտթենով մէկ թիւն մեծ է կամ փոքր , քան դմիւս թիւն : Բայցի սորանից թիւերու համեմատութիւնն լինում է և ուրիշ եղանակաւ , այսինքն երբ պահանջուռում է խմանալ թէ որքան անզամ մէկ թիւն մեծ է , կամ փոքր , քան դմիւս թիւն : Թող սուած թիւերն Անվն 18 եւ 3 . որովհետեւ թիւն 3 սլարունակուռում է 18ի մէջ 6 անզամ , նորա համար թիւն 18 մեծ է քան դերեքն 6 անզամ . ուստի եթէ պահանջուռում ըլի խմանալ թէ որքան անզամ մեծ թիւն մեծ է քան դիոքր թիւն , կամ փոքր թիւն փոքր է կամ նուազ է , քան դմեծ թիւն՝ սլետք է միայն մեծ թիւն քաժանել փոքր թիւով , եւ քանորդն իլինի ո-

բոնելի թիւն : Եսառց կըհետեւի , որ մեծ թիւն հաւասար է վոքր թուոյն \times քանորդիւ , իսկ վոքր թիւն հաւասար է մեծ թուոյն : քանորդի վերայ :

Խնդիր 1 . Գտիր երկու այնպիսի թիւեր , որոնց մէկը լինի մեծ քան զմիւսն 8 անգամ :

Այս օրինակի վճռելու համար՝ հարկաւոր է միայն վերտոնել որպիսի եւ իցէ թիւ , զորօրինակ 15 վոխանակ վոքր թուոյն , եթէ վերտոնենք այս թիւըն 8 անգամ , կամ որ նոյն է բաղմապատկենք թիւովն 8՝ կստացուի մեծ թիւն 120 :

Խնդիր 2 . Գտիր երկու թիւ , որ նորանց քանորդն լինի հաւասար վոքր թուոյն :

Վեր առ որպիսի եւ իցէ թիւ . զորօրինակ 9 վոքր թուոյ տեղը . քանորդն եւս պէտք է լինի 9 . որովհետեւ մեծ թիւն հաւասար է վոքր թուոյն \times քանորդիւ . նորա համար կստայուի 9×9 , կամ 81 . ուստի որոնելի թիւերն կլինին 81 եւ 9 :

Դիցուք թէ հարկաւոր է խմանակ , որպիսի թիւն կըելանէ , եթէ 12 նախ բաղմապատկենք թուովն 7 եւ ստացուած արտադրեալն բաժանենք թուովն 6 .

$$12 \times 7 = 84 ; 6 = 14 .$$

ուստի որոնելի թիւն է 14 .

Եթէ վոխունք զործողոթեան կարուը , այսինքն նախ բաժանենք տուած թիւն 12 թիւովն 6 եւ քանորդն բաղմապատկենք թուովն 7 զորօրինակ .

$$12 : 6 = 2 \times 7 = 14$$

Կստացուի մի եւ նոյն քանորդն եւ մի եւ նոյն արտադրեալ թիւն :

Արտադրեալ Առոյ փոխական վերայ:

Դիցուք թէ տռած ևն բաղմապատկիշ կամ արտադրիչ թիւերն 7 և 5 . Նորանց արտադրեալն հասար է 35 . Եթէ այս տռեալ բաղմապատկիշ թիւերէն մէկը , զորօրինակ 5 մեծացնենք որքան եւ իցէ անգամ , զորօրինակ 10 անգամ , այսինքն՝ բաղմապատկենք 7 և թիւովն 50՝ կստացուի արտադրեալն 350 . որ 10 անգամ մեծ է , քան զ ներկայ արտադրեալն (35) . Նորա համար որ բաղմապատկելի թիւըն վեր առանք 10 անգամ : Եթէ բաղմապատկելին 7 և մեծացնենք որքան եւ իցէ անգամ , զորօրինակ 2 անգամ . այսինքն՝ բաղմապատկենք 14ն թիւովն 5 կստացուի արտադրեալն 70 . որ երկու անգամ մեծ է քան դներկայ արտադրեալն (35) . տարի որքան անգամ բաղմապատկիշ թիւերէն մէկը մեծանումէ , այնքան անգամ մեծանում է եւ արտադրեալ թիւն : Թոնդ տռեալ թիւերն լինին 20 եւ 8 . Նորանց արտադրեալն —— 160 , Եթէ այս արտադրիչ թիւերէն մէկը , զորօրինակ 8 և նուղացնենք որքան եւ իցէ անգամ . զորօրինակ 4 անգամ՝ կստացուի բաղմապատկիշն 2 արտադրեալն 20 × 2 —— 40 .

Այս թիւն 4 անգամ նուազ է կամ փոքր է քան դներկայ արտադրեալն (160) . Եթէ տռաջին արտադրիչ թիւն 20 նախ՝ բաժանենք թուովն 4 եւ

թետոյ՝ բաղմապատկենք միւս արտադրիչ թիւովն 8՝
կստացուի դարձեալ 40 . նորա համարոր 20 : 4 = 5 ,
 $5 \times 8 = 40$) այօինքն՝ թիւ 4 անգամ նուազ
կամ փոքր քան զներկայ արտադրեալն :

3. Եթէ բաղմապատկենք թիւերէն մէկը նուազ-
ցնենք . իսկ միւսն մեծացնենք մի և՛ նոյն թիւով
անգամ՝ արտադրեալ թիւն չի փոխուսուի . նորա
համար որ որքան անգամ արտադրեալն նուազում է ,
երբ որ նուազացնում ենք արտադրիչ թիւերէն մէկը .
այնքան անգամ մեծանում է նա , երբոր մեծացնում
ենք միւս արտադրիչ թիւն :

$$0\text{րինսկ} \cdot 12 \times 8 = 96$$

Եթէ նուազացնենք առաջին արտադրիչն և ան-
գամ ևւ մեծացնենք երեկորդ արտադրիչն դարձեալ և
անգամ՝ կստացուի

$$3 \times 32 = 96 \cdot$$

Խնդիր . Որովհայ փոխուսութիւն կը ծագուի արտա-
դրեալ թուոյ մէջ , եթէ բաղմապատկենք թիւերէն
մէկը մեծացնենք 10 անգամ . իսկ միւսն 2 անգամ :

Արտադրեալ թիւն կը մեծանէի 10 անգամ , եթէ
միայն առաջին բաղմապատկենք մեծացնէի 10 ան-
գամ . բայց որովհետեւ մեեսացնում ենք երկրորդ բաղ-
մապատկենքն իւս երկու անգամ . նորա համար ար-
տադրեալ թիւն կը մեծանայ դարձեալ 2 անգամ . ուս-
տի նա (արտադրեալն) 10×2 . կամ 20 անգամ :

Քանորդի փախովստթեան վերայ :

1. Յոնդ բաժանելի թիւն լինի 45. իսկ բաժանարան 9. սորանց քանորդն $= 5$. Եթէ բաժանելի թիւն բաղմապատկենք որպիսի եւ իցէ թիւով . զորօրինակ թուովն երկու եւ բաժանենք սուեալ բաժանարար թուով վերայ*

$$90 : 9 = 10$$

Կստայուի քանորդն (10) . որ երկու անգամ մեծ է քան դառաջին քանորդն . նորա համար որ մի եւ նոյն բաժանարարն պարունակուում է բաժանելի թուոյ մէջ 2 անգամ : Էստուց կհետեւի , որ քանորդն մեծանում է այնքան անգամ որ քան անգամ մեծանում է բաժանելի թիւն :

2. Մեծացնենք հիմայ բաժանարար թիւն

$$48 : 4 = 12$$

Եթէ բաղմապատկենք բաժանարարն որպիսի եւ իցէ թիւով . զորօրինակ 6 ով եւ բաժանելի

$$48 : 24 = 2^*$$

Կստացուի քանորդն 2 . այս երկրորդ քանորդն 6 անգամ փոքր է , քան դառաջինն . նորա համար որ 6 անգամ վեր առած բաժանարարն պէտք է պարունակուի մի եւ նոյն բաժանելի թուոյ մէջ սակաւ անգամ : Էստուց կը հետեւի , որ քանորդն կը նուշդի այնքան անգամ , որ քան անգամ կը մեծանայ բաժանարարն :

3. Հիմա մեծացնենք բաժանելին և բաժանարան մի և նոյն թուով

$$18 : 9 = 2$$

Եթէ բաղմապատկենք բաժանելին և բաժանարարն որպիսի և իցէ թիւով . զորօրինակ թուովն 5 ,

$$90 : 45 = 2$$

Կոտացուի մի և նոյն քանորդն . նորա համար ոք որքան անդամ այս քանորդն մեծացաւ բաժանելի թուոյ մեծանալէն , այնքան անդամ նուազուեցաւ նա բաժանարարի մեծանալէն . ուստի եթէ բաժանելին և բաժանարարն բաղմապատկուին մի և նոյն թուով՝ քանորդն չի փոփոխուի ,

Այս եղանակաւ կարելի է հանել հետեւորդ՝ եղբակացութիւններ :

1. Որքան անդամ նուազում է բաժանելի թիւն , այնքան նուազում է քանորդն . որովհետեւ նուազուած բաժանելի թուոյ մէջ բաժանարարն պարունակուում է սակաւ անդամ , այսինքն՝ այնքան սակաւ անդամ որքան անդամ նուազում է բաժանելին :

2. Որքան անդամ նուազուում է բաժանարար թիւն , այնքան անդամ մեծանում է քանորդն . նորա համար ոք բաժանարարն մի և նոյն բաժանելի թուոյ մէջ սլարունակուում է շատ անդամ , այսինքն՝ այնքան անդամ , որքան անդամ նուազում է բաժանարարն :

3. Եթէ բաժանելին և բաժանարարն բաժանելին մի և նոյն թիւով նորանց քանորդն կըմա

անփոխոխ . նորա համար որ որքան անդամ այս
քանորդն նուազուում է , երբ որ բաժանուում է բա-
ժանելին , այնքան անդամ մեծանում է նա , երբու
բաժանուում է բաժանարար թիւն :

Խնդիր 1 . Երբ որ բաժանելի թիւն մեծանում ;
100 անդամ . եւ բաժանարարն 10 անդամ . ինչ վո-
վովիսութիւն կըծագուի քանորդի մէջ :

Եթէ միայն բաժանելի թիւն մեծանար 100 ան-
դամ՝ քանորդն եւս կմեծանար 100 անդամ . բայց ո-
րովհետեւ բաժանարարն եւս 10 անդամ մեծանում ;
Նորա համար քանորդն պէտք է նուազի 10 անդամ .
ուստի քանորդն կմեծանայ միայն 10 անդամ :

Խնդիր 2 . Ինչ վովիսութիւն կըծագուի քա-
նորդի մէջ , եթէ բաժանելի թիւն մեծանայ 100
անդամ եւ բաժանարարն նուազի 10 անդամ :

Եթէ միայն բաժանելի թիւն մեծանար 100 ան-
դամ՝ քանորդն եւս կմեծանար 100 անդամ . բայց
որովհետեւ բաժանարարն նուազուում է 10 անդամ .
Նորա համար քանորդն դարձեալ կմեծանայ 100×10
կամ 1000 անդամ :

Եթէ որովիսի եւ իցէ երկու թիւեր բաղմազառելուին
նորանցից ամէն մէկը կսպառունակուի արտադրեալ
թուոյ մէջ այնքան անդամ , որքան միւսն պարու-
նակում է իւր մէջ միութիւններ : Ուստի արտա-
դրեալ թիւն պէտք է բաժանուի այս թիւերէն ամէն
մէկի վերայ սուանց մնացորդի . զորօրինակ . 8×5
 $= 40$: Արտադրեալ թիւն 40 բաժանուում է այն
թիւերէն ամէն մէկի վերայ սուանց մնացորդի : Երբ
որ արտադրեալն ծաղուում է երեք կամ աւելի բաղ-
մազառելիչ թիւերէն՝ այն ժամանակ եւս նա բաժա-

նուռմ է առանց մնացորդի նորանցից ամէն մէկի վերայ :

Ծանօթոթիւն . Եթէ որպիսի եւ իցէ թիւ , զորօրինակ 16 , (որ բաժանուում է թիւովն 8 առանց մնացորդի ,) բազմապահուի որպիսի եւ իցէ թւով , զորօրինակ 5 , արտադրեալ թիւն 80 կրաժանուի մի եւ նոյն թուովն 8 առանց մնացորդի :

$$16 : 8 = 2$$

$$80 : 8 = 10$$

Որովհետեւ 8 ն երկու անգամ պարունակուում է 16 ի մէջը , նորա համար թիւն 8 հինգ անգամ վեր առած , բաժանելի թուոյ մէջը պէտք է պարունակուի աչ թէ երկու անգամ , այլ հինգ անգամ ամելի . այսինքն՝ 10 անգամ :

Գտիր բաժանարարներն հետեւորդ թիւերու . 36 եւ 48 :

Բաժանարարներն 36 ին են 1, 2, 3, 4, 6,

9, 12, 18, 36.

————— 48 ին 1, 2, 3, 4, 6,

8, 12, 16, 24, 48.

Եթէ բաժանարարներն համեմատենք միմևանց հետ՝ կոտեսանենք որ 1, 2, 3, 4, 6, 12 են բաժանարար վերը զրուած երկու թիւերու , եւ նորա համար զուում են հատարակ բաժանարար . ուստի հասարակ բաժանարար ասուում է այնպիսի թիւ , որով բաժանուում են երկու կամ աւելի թիւեր առանց մընացորդի :

Յ.իւերու համեմատոթեան կամ բաղդատոթեան
օրինակներ :

1. Որքան անգամ 12,425 մեծ է քան դ25՞ :
2. Որքան անգամ 216 վոքր է քան դ47,520՞ :
3. Որքան անգամ 3600 մեծ է քան դ72՞ , և
վոքր է քան դ118,800՞ :
4. Դիցուք թէ ես շահով տուած ունիմ դրամ՝ եւ
ամէն մէկ 100 մանէթի վերայ ստանում եմ շահ 5
մանէթ : Իմացիր , քանի անգամ մեծ է շահով տո-
ւած դրամագլուխը իւր շահից :
5. Յայտնի է , որ ժամացոյցն (սահաթ) ունի եր-
կու սլաք . մինն ցոյց է տալի ժամ , իսկ միւսն ցոյց
է տալի վայրկեան (մինչդա) եւ ասուում է վայրկե-
նական սլաք , իմացիր , որքան անգամ վայրկենա-
կան սլաքն շուտով շարժուում է քան դսլաքն ժա-
մու կամ սահաթի :
6. Երկու թիւերէն վոքրն հաւասար է 9281 . իսկ
մեծ թիւն մեծ է քան դվոքր թիւն 28 անգամ :
Գտիր մեծ թիւն :
7. Տուած են երկու թիւեր , նորանցից մեծ թիւն
հաւասար է 12,896 . իսկ վոքր թիւն 403 անգամ
նուազ է քան դմեծ թիւն : Իմացիր , որպիսի թո-
ւոյն հաւասար է վոքր թիւն :
8. Գտիր 5 ջուխտ այնպիսի թիւեր , որոնցից ա-
ռաջիններն լինին մեծ քան դվերջին թիւերն 35 ան-
գամ :
9. Գտիր 5 ջուխտ սյնովիսի թիւեր , որոնց ա-

ուաջիններն լինին նուազ քսն զվերջին թիւերն 120
անդամ :

10. Գտիր երկու այնպիսի թիւեր , որոնցից մեծ
թիւն լինի մեծ քան զփռքը թիւն այնքան անդամ .
որքան միտթիւն պարունակուումէ վոքը թուոյ մէջ :

11. Իմ վողերս պահուած են երեք մնդուկի մէջ .
առաջին մնդուկի մէջ կայ 24,720 մանէթ . Երկրորդ
մնդուկի մէջ 8 անդամ սակաւ քան դ24,720 ն . իսկ
երրորդ մնդուկումը պահուած է դրամ 5 անդամ ա .
ւելի քան դթիւն այն դրամներու , որոնք պահուած
են երկրորդ մնդուկի մէջ : Իմացիր , որքան դրամ
կայ երկրորդ և երրորդ մնդուկներու մէջը :

12. Որքան անդամ 46,827 ն վոքը է կամ նու .
ազ է քան զարտադրեալն 5203 և 126 թիւերու :

13. Ո՞րքան անդամ արտադրեալն թիւերու 4248
և 2075 վոքը է կամ նուազ է քան զարտադրեալն
թիւերու 1062 և 33,200 :

14. Ո՞րքան անդամ արտադրեալն $3 \times 4 \times 5 \times 6$
նուազ է քսն զարտադրեալն $6 \times 8 \times 10 \times 12$:

15. Ի՞նչ վովոխութիւն կըծագուի երկու թիւերու , զորօրինակ 148 և 249ի արտաորեալ թուոյ
մէջ , եթէ բազմապատկելի թիւն մեծացնենք 4 ան .
դամ . իսկ բազմապատկիչ թիւն 7 անդամ :

16. Ինչ վովոխութիւն կըծագուի երկու թիւերու
արտադրեալ թուոյ մէջ , եթէ բազմապատկելի թիւն
նուազացնենք 16 անդամ . իսկ բազմապատկիչ թիւն
մեծացնենք 48 անդամ , թուղ տաւած թիւերն լինին
256 և 17 :

17. Դիսուք թէ տուած են միմեանց վերայ բաղմակակելու համար 405 և 360 . Եթէ խնչալէս առաջին թիւն , նոյնալէս եւ երկրորդն նուազացնենք 15 անգամ՝ նորանց արաւազրեալն կը փոփոխուի թէ ոչ :

18. Բազմապատկեան 28 և 42 ով եւ նորանց սրտադրեալն բազմապատկեան դարձեալ 56 ով , ի՞նչ փոփոխութիւն կը ծագուի արտադրեալ թուոյ մէջ , եթէ ամէն մէկ արտադրիչ թիւն նուազացնես 4 անգամ :

19. Ի՞նչ փոփոխութիւն կը ծագուի քանորդի մէջ , եթէ բաժանելի թիւն նուազացնենք 12 անգամ . իսկ բաժանարարն 3 անգամ :

20. Ի՞նչ փոփոխութիւն կը ծագուի քանորդի մէջ , եթէ բաժանելի թիւն մեծացնենք 28 անգամ եւ բաժանարարն նուազացնենք դարձեալ 28 անգամ :

21. Ի՞նչ փոփոխութիւն կը ծագուի քանորդի մէջ , եթէ բաժանելի թիւն նուազացնենք 256 անգամ . իսկ բաժանարարն մեծացնենք 16 անգամ :

Ա երոյդրեալ օրինակներու պատասխանները :

1. 497 անգամ :
2. 220 անգամ :
3. 1) 50 անգամ մեծ է . 2) 33 անգամ փոքր է :
4. 20 անգամ :
5. 12 անգամ :
6. 259,868 անգամ :
7. 32 :
8. 70 և 2 · 210 և 6 · 770 և 22 · եւ այլն ,
9. 4 և 480 · 31 և 3720 · 15 և 1800 և այլն :

10. 4 և 16 • 5 և 25 • 6 և 36 . եւայն :
11. Երկրորդ սնդուկի մէջ կայ 3090 . խել երրորդ սնդուկի մէջ 15,450 մանէթ :
12. 24 անգամ :
13. 4 անգամ :
14. 16 անգամ :
15. Կմեծանայ 28 անգամ :
16. Կմեծանայ 3 անգամ :
17. Լսուաղի 225 անգամ :
18. Լընուաղի 64 անգամ :
19. Լընուաղի 4 անգամ :
20. Կմեծանայ 784 անգամ :
21. Լընուաղի 4096 անգամ :

Պէտքէս խնդիրներ , որոնք կը վերաբերին նախընթաց
կտնաներուն :

1. Եթէ անյայտ թուոյ վերայ աւելացնենք 745՝
կառացուի 1303 : Գտիր անյայտ թիւն :
2. Գտիր սյնալիսի թիւ , որ նորանից եթէ հա-
նենք 398՝ ելանէ մնացորդն հաւասար 1346 :
3. Անյայտ թիւն բաղմապասկուած 35ով հաւա-
սարէ 3605 : Գտիր անյայտ թիւն :
4. Գանորդն անյայտ թուոյն զոլով բաժանուած
105ով հաւասարէ 739 : Գտիր անյայտ թիւն :
5. Եթէ որոնելի թուոյ վերայ աւելացնենք 435՝

կստացովիթիւըն կրկնապատիկ մեծ կամ աւելի քան
գործնելիթիւըն : Գտիր այդպիսի որոնելիթիւն :

6. Եթէ անյայտ թիւն բաղմապատկենք 5ով և
արտադրեալ թուոյ վերայ աւելացնենք 145՝ կստացուի
այնպիսի թիւ, որպիսին կստացուի անյայտ թուոյ բաղ-
մապատկելին Յով եւ արտադրեալ թուոյ վերայ աւե-
լացնելին 7295ի : Գտիր այնպիսիթիւ :

7. Անյայտ թիւն բաղմապատկուած 70ով 25 մի-
տթենով մեծ է քսն դ43 : Գտիր այնպիսի սնյայտ
թիւն :

8. Եթէ անյայտ թիւն բաղմապատկենք թուովն
25 և արտադրեալ թուոյ վերայ աւելացնենք 429՝
կստացուի 629 : Գտիր անյայտ թիւն :

9. Եթէ ունենայի էլի 500 մանէթ կըկարողանայի
տալ իմ պարտատիրոջը 1260 մանէթ, որն որ ես
պարտական եմ . եւ դարձեալ կմնար ինձ 19 մանէթ :
Իմացիր, որքան դրամ կայ ինձ մօտ հիմա առ ձեռն
պատրաստ :

10. Վաճառականի մէկը վաճառեց իւր ասլրանքը
(որ նա դնել էր 325 մանէթի) այնպիսի զնով, որ ե-
թէ նա ստացել էր 12 մանէթով աւելի՝ նորա օդու-
տըն կըինէր հաւասար նորա ծախուց (խարջի) : Իմա-
ցիր, քանի մանէթի վաճառուեցաւ այն ասլրանքն :

11. Հինդ կտոր նուրբ կտաւի մէջ պարունակու-
ում է 126 դադ . առաջին կտորն պարունակում է
իւր մէջ 40 դադ . երկրորդ կտորն՝ 25 դադ . չորրորդ
կտորն՝ 27 դադ եւ հինգերորդն՝ 17 դադ : Իմացիր,
քսնի դադ պէտքէ լինի երրորդ կտորի մէջ :

12. Թիւն 12,586 պահանջուռմ է բաժանել հինգ
մասունքներու հետեւեալ եղանակաւ . առաջին մասն
(վայր) հաւասար է 3748 . երկրորդն հաւասար է
մնացորդին առաջին և երրորդ մասունքների . իսկ
երրորդն հաւասար է 1203 . չորրորդն հաւասար է
զումարին առաջին և երկրորդ մասունքներու ա-
ռանց երրորդ մասին : Գայիք երկրորդ , չորրորդ և
հինգերորդ մասունքներն :

13. Որպիսի թիւ պէտք է աւելացնենք 56ի և
եսոյ բաժանմենք թուովն 55՝ որ ստացուի քանորդն
2854 :

14. Ավելացնել միմեանց վերայ հետեւեալ թիւերն
 $4257 + 1267 + 970 + 4067$. սորանց զումարիցը հա-
նել 6304 , մնացորդն բաշմապակել 4032ով և վեր-
ջապէս արտադրեալ թիւն բաժանել թուովն 448 :

15. Որքան անգամ պէտք է 125ի վերայ աւելա-
ցնենք թիւն 78 , որ ստացուի 1295 :

16. Որքան անգամ պէտք է 2000իցը հանենք
48 , որ ստացուի մնացորդն 128 :

Դիցուք թէ աշակերտի մէկը պէտք է զրէ 368 էջ .
նա զրեց 108 էջ 27 սահաթուան մէջ : Խմացիք քա-
նիք սահաթուան մէջ կըդրէ նա 368 էջն :

18. Երկու թիւերու զումարն հաւասար է 594 .
Եթէ մեծ թիւն բաժանուի փոքր թուով՝ քանորդն
կլինի հաւասար 21 : Գայիք այնպիսի թիւերն :

19. Ես գնեցի երեք սեսակլ թուղթ , սլրակն (դաս-
տայ) 40 , 30 և 20 կուկէիի . խմացիք քանիք սլրակ
էր զնամ թուղթն , եթէ բոլորի դինն սուի 117 մա-
նէթ , եւ եթէ որքան պրակ էր առաջին տեսակի ,

այնքան սլրակ էր եւ երկրորդ եւ երրորդ տևակի :

20. Վեց թիւերիցը առաջինն հաւասար է 2456ի . երկրորդն հաւասար է 2098ի . Երրորդն հաւասար է մնացորդին առաջին եւ երկրորդ թիւերու . չորրորդն հաւասար է մնացորդին երկրորդ եւ երրորդ թիւերու . Հինգերորդն հաւասար է մնացորդին առաջին եւ չորրորդ թիւերու . վերջապէս վեցերորդն հաւասար է մնացորդին չորրորդ եւ երրորդ թիւերու : Գամբը զումարն բոլոր թիւերու :

Ա. Իր դրուծ օրինակներու պատճեններ :

1. 558 . Լուծումն . որովհետեւ անյայտ թույլերայ սլէտք է աւելացնենք 745 , որ ստացուի 1303 . Նորաւ համար սլէտք է պարունակել , որ անյայտ թիւ 745 միութենով նուաղ է կամ փոքր է , քան դ1303ն . ուստի թիւն 745 եթէ հանենք 1303էն՝ մնացորդն կլինի անյայտ թիւ . այսինքն՝ 1303—745 = 558 :

2. 1744 . Լուծումն . անյայտ թիւն սլէտք է հանենք 398՝ որ ստացուի 1346 : Եստոց կը հետեւի , որ անյայտ թիւն 398 միութենով աւելի է քան դ1346 . Ուստի եթէ 398 աւելացնենք 1346ի վերայ՝ կստացուի որոնելի թիւն զորօրինակ 1346+398 = 1744 :

3. 103 . Լուծումն . յայտնի է , որ անյայտ թիւն 35 անդամ նուաղ է կամ փոքր է քան դ3605 . Նորա համար նու սլէտք է բաղմակատկուի 35 ովլ , որ ըստացուի 3605 : Եթէ 3605 բաժանենք 35 ովլ կստա-

յուի անյայտ թիւն , զորօրինակ . $3605 : 35 = 103$:

4. $77,595 \cdot 1$ լուծումն . անյայտ թիւն եթէ բաժանուի 105ով հաւասար է 739ի , որին նա (անյայտ թիւն) 105 անդամ մեծ է . քան դ739ն . ուստի եթէ 739 բաղմապատկենք 105ով , նորանց արտադրեալն կլինի անյայտ թիւ : Զորօրինակ . $739 \times 105 = 77595$:

5. $435 \cdot 1$ լուծումն . Եթէ կամենաս անյայտ թիւն ստանալ կտմ բաղկացնել կրկնապատկեալի թիւը՝ սկզբ է նորա վերայ աւելացնես միևնույն թիւ . բայց որովհետեւ խնդրոյ մէջ գրուած է , որ անյայտ թուոյ վերայ աւելանում է 435 . Նորա համար անյայտ թիւն = 435 :

6. $3575 \cdot 1$ լուծումն . զումարն 145ի եւ արտադրելոյն անյայտ թուոյն $\times 5$ ով հաւասար է 7295 եւ անյայտ թուոյն $\times 3$ ով . Եթէ կամենաս անյայտ թիւն $\times 3$ ով ստանալ զումարն 145 եւ անյայտ թիւն $\times 5$ ով սկզբ է նորա վերայ աւելացնես 145 եւ անյայտ թիւն $\times 2$ ով . բայց որովհետեւ խնդրոյ մէջ գրուած է , որ աւելանում է 7295 . Նորա համար անյայտ թիւն $\times 2$ ով եւ թիւն 145 սկզբ է լինին հաւասար 7295 . ուստի անյայտ թիւն $\times 2$ ով = $7295 - 145 = 7150$. բայց անյայտ թիւն = $7150 : 2 = 3575$:

7. 1 .

8. 8 .

9. 779 մանէթ :

10. 638 մանէթ :

11. 17 գաղ :

12. Երկրորդ մասն = 2545 . Խակ չորրորդ մասըն = 5090 . Հինգերորդն = 0 :

13. 156,914 . Լուծումն . անյայտ թիւն + 56 սկզբ է 55 անդամ լինի մեծ քան դ2854 այսինքն . հաւասար 156,970 . ուստի անյայտ թիւն = 156,970 - 56 = 156,914 :

14. 38,313 :

15. 15 անդամ :

16. 39 անդամ :

17. 92 սահաթուան մէջ . Լուծումն . աշակերտը 108 էջ դրեց 27 սահաթուան մէջ . ուրեմն ամէն մէկ սահաթուան մէջ նա գրում էր և էջ . նորան հըրամայած էր դրել 368 էջ . ուրեմն նա սկզբ է պարագի այնքան սահաթ , որքան անդամ և էջն սակաւ է կամ նուազ է , քան դ368 էջն . այսինքն՝ 92 սահաթ :

18. Գոքը թիւն 27 . Խակ մեծ թիւն 567 : Լուծումն . որովհետեւ մեծ թիւն բաժանուած փոքը թուով արտադրումէ քանորդն 21 . Նորա համար մեծ թուոյ մէջ պարունակուում է փոքը թիւն 21 անդամ . Երկու թիւմերու գումարի մէջ բացի մեծ թիւն՝ պարունակուում է եւ փոքը թիւն . ուրեմն տուեալ գումարի մէջ (594) պարունակուում է փոքը թիւն 21 + 1 , այսինքն՝ 22 անդամ . Փոքը թիւն դանելու համար՝ սկզբ է 594 բաժանել 22ով . ուստի կստացուի փոքը թիւն 27 . Խակ մեծ թիւն 27 × 21 = 567 :

19. 130 սլրակ ամէն մէկ տեսակի : Կոծումն . Եթէ
ամէն մէկ տեսակի զնել էի մէկ մէկ սլրակ՝ պէտք է
տայի 40+30+20 այսինքն՝ 90 կօպէկ . բայց որովհետեւ
բոլոր զնած թուղթն արժէ 117 մանէթ , նորա հա-
մար այնքան սլրակ էր զնած թուղթն , որքան ան-
դամ 90 կօպէկն սլարունակուում է 117 մանէթի մէ-
ջը . այսինքն՝ 130 սննդամ :

20. 8750 .

Σωτηρίδης β.

Մի եւ նոյն սեռի անուանական թիւերն կարող
են ունենալ զանազան անուններ , զորօրինակ . 7
դաշ եւ 8 վերշոկ (16երրորդ մասն դաշի) . սոքա ևն
միասնու անուանական թիւեր , նորա համար որ ինչ-
պահ գաղն , նոյնակես եւ վերշոկն ցոց են տակի որ-
պիսի եւ խցէ իրի չափը . բայց այս չափերու անուն-
ներն զանազան են . որովհետեւ դաշն է չափ մեծա-
գոյն քան գրիւրշոկն , նորա համար 7 դաշն ասուոմ
է անուանական թիւ մեծագոյն տեսակի . խոկ 8 վեր-
շոկն անուանական թիւ վոքքոյն տեսակի :

Որովհետեւ անուանական թիւերու կանոններն ըլք-
ուելու ժամանակը շատ հարկաւոր է զիտենալ , թէ
միտթիւնն մեծապոյն տեսակի որքան պարունակում
է իւր մէջ միտթիւն փոքրագոյն տեսակի . նորա հա-
մար պէտք է լաւ սերտել հետեւեալ աղխւսակը չափե-

րու . թէ երկայնութեան , թէ կշռոյ , թէ դրամներու և թէ այլ իրերու :

Աղխասակ Երկայնութեան և կշռոյ :

1. Չափ երկայնութեան :

Միլն (փարսախ) ունի 7 վերստ (մղոն) .

— վերստն — 500 սաժէն (լանդնաչափ) .

— սաժէնն — 3 արշին (դադ) .

— արշինն — 4 չետվերտ . (քառորդ դադի) :

Մէկ սաժէնն — 7 փուտ . (ոտնաչափ)

2. Չափ լըռջ , դինույ և այլն :

Մէկ բոչկայն (տակառ) ունի 40 վեղրայ (կուժ) .

— վեղրայն — 10 շտոփ . (չիշ քառակուսի) :

— շտոփն — 2 ու կէս շտոփ կամ կրուժկայ .

(տասնորդ վեղրայի) :

2. Տուրիւառութեան կշիռ :

Մէկ բերկուլեցն ունի 10 փութ :

— փութն — 40 ֆունտ (զրուանքայ) :

— ֆունտն — 32 լոտ . (կէս ոնդի կամ 32 ման լոեր) :

— լուն — 3 դոլոսնիկ . (մսխակ) :

— դոլոսնիկն — 96 դօլեայ . (ման , ըաժին)

Դեղավաճառութեան կշռ.

Մէկ ֆունան ունի 12 ունկի (84 դօլորնիլ) :

— ունկին — 8 դրախմ : (գահեկան) :

— դրախմն — 60 պրան . (չափ գեղանոցական հաւասար կշռով դարձնատի) :

5. Դրամք :

Մէկ խմակը (ունկերամ) ունի 10 ոուրլի արծաթի,

կէս խմակը (ալումինիում) — 5 ոուրլի —

— ոուրլին — 10 դրիմին .

— դրիմին — 10 կօսլէկ .

— սլամին — 3 կօսլէկ .

— կօսլէկն — 2 դէնդայ . (կէս կօսլէկ) .

— դէնդան — 2 ուռուշկայ . (չորրորդ մասն կօսլէկի .

6. Չափ ժամանակի :

Մէկ տարին ունի 12 ամիս կամ 365 օր . (բայց

նահանջ տարին 366 օր) .

— ամիսն — 30 օր :

— եօթնեակն — 7 օր :

— օրն — 24 ժամ (սահմայ) :

— ժամն — 60 րոպէ (մինուտ)

— մինուտն — 60 մանրերկրորդ . (սեկոնդ) :

7. Չափ թղթոյ :

Մէկ սպառակն (ստոպայն) ունի 20 սլրակ (դաստայ)

— սլրակն — 24 թղթ (լիստ)

ԳԼՈՒՅ Ա.

Եթէ աշակերտն լու սերտէ վերը դրուտծ աղիսա-
կը՝ կարող է հեշտութիւնով խմանալ թէ մէկ միութեան
մէջ մեծ չափու որքան պարունակուում են միութիւններ
փոքր չափու մի և նոյն սեռի : Զորօրինակ աղիւ-
սակէն երեւում է որ մէկ վութն պարունակում է
իւր մէջ 40 ֆունտ . ուրեմն դժուար չէ խմանալ թէ
7 վութն որքան պարունակում է իւր մէջ ֆունտ :

Որովհեան մէկ վութն պարունակում է իւր մէջ
40 ֆունտ . նորա համար 7 վութի մէջ պէտք է
պարունակուին ֆունտերն 40 անգամ աւելի . ուրեմն
եթէ 7 այսինքն թիւն մեծաղոյն տեսակի բաղմա
պատկենք թուովն 40՝ կստացուի որոնելի թիւն 280
ֆունտ :

Եթէ հարկաւոր լինի մեծաղոյն տեսակի միութիւն-
ներէն ստանալ միութիւններ փոքրաղոյն տեսակի ,
դորօրինակ . խմանալ թէ քանի ժամ պարունակում էն
իւրեանց մէջ մեծաղոյն տեսակի թիւերն՝ 8 եօթնեակն
6 օր և 2 ժամ՝ պէտք է 8 եօթնեակն բաղմապատ-
կես թուովն 7 . նորա համար որ եօթնեակն ունի 7
օր . ստացած արտադրեալ թուով վերայ աւելացնես 6
օր , ուստի կստացուի 62 օր . սահաթներու թիւն զբա-
նելու համար պէտք է 62 օրն բաղմապատկես թուովն
24 , նորա համար որ օրն ունի 24 սահաթ . արտա-
դրեալ թուոյ վերայ՝ 1488 պէտք է աւելացնես դար-
ձիալ 2 սահաթ . ուստի կստացուի 1490 սահաթ :

Այս վճիռը կճեւակերպուի այսպէս :

8 հօթնեակ . 6 օր . 2 ստհագ .

$$\begin{array}{r}
 8 \text{ հօթնեակ} \\
 \times 7 \\
 \hline
 56 \\
 + 6 \\
 \hline
 62 \text{ օր} \\
 \times 24 \\
 \hline
 248 \\
 124 \\
 \hline
 1488 \text{ ժամ} \\
 + 2 \\
 \hline
 1490 \text{ ժամ}
 \end{array}$$

Այս զործողոթիւնը , կսորուեցնէ թէ ինչ եղանակաւ ալէտք է միութիւններն մեծադոյն տեսակի վերածել կամ ձեւացնել փոքրագոյն տեսակի միութիւններու մէջ , եւ ասուում է բեկումն (раздробление)

Վերոյիշեալ օրինակներից կարելի է հանել հետեւ կանոններ բեկման համար :

Նախ եթէ սպահանջուռամ ըլի որովախի եւ իցէ անուանական թիւ մեծագոյն տեսակի բերել շինել թիւ փոքրագոյն տեսակի , ալէտք է միայն այդ թիւն բաղմապատկել յարանուանող թուով , այսինքն թուով , որ կցուցանէ թէ մեծագոյն տեսակի թիւն որքան է սպա-

բունակում իւր մէջ միութիւններ թուոյ վոռքրապոյն տեսակի . զորօրինակ թիւս 8 եօթնեակ է թիւ մեծագոյն տեսակի . իսկ թիւս 7 օր է թիւ վոռքրապոյն տեսակի . այստեղ թիւս 7 ասուում է յարանուանող թիւ : (значительное число).

Երկրորդ . Եթէ պահանջուում ըլի բեկանել բաղաղը բեալ անուանական թիւ բաղկացեալ չատ անուանական թիւերից մի եւ նոյն սեռի՝ եւ բերել շինել թիւ վոռքրապոյն տեսակի . պէտք է նախ բերել շինել թիւ մեծագոյն տեսակի , թիւ յաջորդ վոռքրապոյն տեսակի բաղմապատկելով առաջինն յարանուանող թուով . եւ երկրորդ՝ սուացած թուոյ վերայ աւելացնես թիւ վոռքրապոյն տեսակի , եթէ այդովիս թիւ կայ տուեալ թիւերու մէջ . եւ ասկա ելեալ թիւն բեկանել վերոյիշեալ եղանակաւ բաղմապատկելով այդ թիւն յարանուանող թուով . եւ այլն . մինչեւ կստացուի թիւ՝ պահանջելի տեսակի :

Խնդիր . Դիցուք թէ մէկ զիրքն պարունակում է իւր մէջ 18 սպաւած թերթ , սմէն մէկ թերթն՝ 16 էջ , իսկ ամէն մէկ էջն 19 սող . խմացիր քանիք սող կայ այն զրքի մէջ :

Խողով վճիռն կլինի այսպէս :

$$\begin{array}{r}
 18 \text{ թերթ} \\
 \times 16 \\
 \hline
 108 \\
 + 18 \\
 \hline
 288 \text{ երես} \\
 19 \\
 \hline
 + 2592 \\
 288 \\
 \hline
 5472 \text{ առդ}
 \end{array}$$

Պատասխանի 5472 առդ

Բեկման օրինակներ :

1. 128 վերտան որքան սաժեն պարունակում է խր մէջ :
2. Խմացիր որքան սեկունդ ո՞նի մէկ եօթնեակն :
3. Խմացիր 4 բոչկան և 3 վեղրան որքան կը բուժեայ պարունակում են խրեանց մէջ :
4. Խմացիր 3 բերկովեցն և 3 փոթն որքան զոլոտիկ պարունակում են խրեանց մէջ :
5. Խմացիր քանի պօլուշկայ պարունակում են խրեանց մէջ 325 ոռըլի արծաթ (մանեթ) , 2 զրի-վին և 5 կօպէկն :
6. Խմացիր 3 ամիսն , 28 օրն . 5 ժամն և 5 րո-

սլէն որքան սեկունդ պարունակում էն խրեանց մէջ :

7. Խմացիր 12 ստուլայ եւ 3 դաստայն քանի թէլըֆ սլարունակում էն խրեանց մէջ :

8. 42 հօթնեակն , 5 օրն եւ 5 սահամքն քանի սեկունդ պարունակում էն խրեանց մէջ :

9. 2 բերկովիցն եւ 16 լուն որքան դոլունիլ պարունակում էն խրեանց մէջ :

10. Քանի սեկունդ կայ մէկ տարուան մէջ , եթէ տարին լինչալէս զիտունները հաստատում են՝ ունի 365 օր , 5 ժամ , 48 մինուտ եւ 48 սեկունդ :

11. Կիցնւք թէ տարին ունի 365 օր , 5 սահամք եւ 48 մինուտ : Խմացիր քանի մինուտ անցել ա քրիստոսի ծնունդին մինչեւ յ6ն Յունուարի 1853 թուի .

Պատուիսաններ :

1. 64,000 տաժէն :
2. 604,800 սեկունդ :
3. 3260 կրուժկայ :
4. 126,720 դոլունիլ :
5. 130,100 պօլուշկայ :
6. 10,213,500 սեկունդ :
7. 6072 թերթ :
8. 25,851,600 սեկունդ :
9. 76,848 դոլունիլ :
10. 31,556,928 սեկունդ :
12. 972,987,960 մինուտ :

Հիմայ տեսանենք թէ ի՞նչ եղանակու պէտք է, միութիւններն փոքրադոյն տեսակի վերածել կամ ձեռացնել միութիւններու մէջ մեծադոյն տեսակի , կամ խմանալ թէ փոքրադոյն տեսակի միութիւններն որքան պարունակում են խրեանց մէջ միութիւններ մեծադոյն տեսակի :

Այն զործողութիւնը , որ կցուցանէ թէ ի՞նչ եղանակու պէտք է խմանալ , թէ միութիւններն փոքրադոյն տեսակի որքան պարունակում են խրեանց մէջ միութիւններ մեծադոյն տեսակի , ասուում է վերածումն միութեանց փոքրադոյն տեսակաց ի միութիւնս մեծադոյն տեսակաց :

Չոր օրինակ . Վիցուք թէ հարկաւոր է խմանալ քանի զաղ պարունակուում է 1280 վերշոկի մէջ . որովհետեւ արշինն (զաղ) մեծ է քան զվերշոկն 16 անգամ . Նորա համար արշինն կլինի 16 անգամ նուազքան զվերշոկներու թիւն . ուրեմն պէտք է միայն 1280 բաժանել թուովն 16՝

| | |
|-------------|----|
| 1280 վերշոկ | 16 |
| 128 | 80 |

ուստի կըելանէ որոնելի թիւն 80 . այսինքն՝ 80 զաղ կսոմ արշին :

Վճռենք զարձեալ մէկ սորա նման խնդիր :

Քանի վութ պարունակումէ խրմէջ 10,000 լոտն : Այս խնդիր վճռելու համար պէտք է նախ՝ 10,000 լոտն բաժանել թուովն 32 . ուստի կստացուի գունակուութիւն , եւ յետոյ այս թիւն բաժանել 40 ով ,

ուստի կստացուի որոնելի թիւն , որ կցուցանէ վու-
թերու որքանութիւնն :

| | | | |
|--|---|--|--|
| $\begin{array}{r} 10,000 \\ - 96 \\ \hline 40 \end{array}$ | $\begin{array}{r} 32 \\ \hline 312 \text{ ֆունտ} \end{array}$ | $\begin{array}{r} 312 \\ - 280 \\ \hline 32 \text{ ֆունտ} \end{array}$ | $\begin{array}{r} 40 \\ \hline 7 \text{ փութ} \end{array}$ |
| | $\begin{array}{r} 32 \\ \hline 80 \end{array}$ | | |
| | $\begin{array}{r} 64 \\ \hline 16 \text{ լուս} \end{array}$ | | |
| | | | |

ուստի 10,000 լուսն պարունակում է իւր մէջ 7
փութ , 32 ֆունտ և 16 լուս :

Խնդիր . Մէկ միլիոն սեկունդն քանիք օր պարունա-
կում է իւր մէջ .

| | |
|--|--|
| $\begin{array}{r} 1,000,000 \\ - 60 \\ \hline 400 \end{array}$ | $\begin{array}{r} 60 \\ \hline 16666 \text{ մինուտ} \end{array}$ |
| | $\begin{array}{r} 360 \\ \hline 400 \end{array}$ |
| | $\begin{array}{r} 360 \\ \hline 400 \end{array}$ |
| | $\begin{array}{r} 369 \\ \hline 400 \end{array}$ |
| | $\begin{array}{r} 360 \\ \hline 40 \text{ սեկունդ} \end{array}$ |

| | | | |
|--------|----------------|----------------|--------------|
| 16,666 | 60 | 277 | 24 |
| 120 | 277 <i>ժամ</i> | 24 | 11 <i>օր</i> |
| <hr/> | | | |
| 466 | | 37 | |
| 420 | | 24 | |
| <hr/> | | | |
| 466 | | 13 <i>ժամ:</i> | |
| <hr/> | | | |

46 *մինուտ:*

Գրասանիսանի 11 *օր* . 13 *ժամ*, 46 *մինուտ* եւ 40 *սեկոնդ*:

Բեկման կամ ըստ ռուսաց (раздробление) ըստուգովիսանն կլինի վերածմամբ կամ բաժանմամբ, ինչպէս վերը ասացինք, որ ռուսաց թուաբանութեան մէջը ասուում է (преобразение):

Օրինակ . Խմացիք ողբան ժամ սլարունակութեան իւրանց մէջ 2 հօթնեակն եւ 5 *օրն*:

$$\begin{array}{r}
 2 \text{ հօթնեակ}, \quad 5 \text{ օր} \\
 \times 7 \\
 \hline
 14 \\
 + \quad 5 \\
 \hline
 19 \text{ օր} \\
 \times \quad 24 \\
 \hline
 76 \\
 38 \\
 \hline
 456 \text{ ժամ:}
 \end{array}$$

Ստուգովիսան համար 456 ժամն սկզբ է բաժանել նախ՝ թուով 24, յետոյ քանորդն՝ թուով 7

Խ. Եթէ սյսօրինակ բաժանելին ստացուին տուած ա-
նուանական թիւերն 2 հօֆնեակ եւ 5 օրն ալէտք է
պարունակել , որ վճիռն ուղիղ է :

| | | | |
|--|---|--|---|
| $\begin{array}{r} 456 \\ - 24 \\ \hline 216 \end{array}$ | $\begin{array}{r} 24 \\ \hline 19 \text{ op} \end{array}$ | $\begin{array}{r} 19 \\ - 14 \\ \hline 5 \text{ op} \end{array}$ | $\begin{array}{r} 17 \\ \hline 2 \text{ հօֆնեակ} \end{array}$ |
| $\begin{array}{r} 216 \\ \hline \dots \end{array}$ | | | |
| $\begin{array}{r} 216 \\ \hline \dots \end{array}$ | | | |

Ուստի դարձեալ ստացանք տուեալ անուանական թի-
ւերն 2 հօֆնեակ եւ 5 օր :

Վերածման ստուգոթիւնն կլինի ընկլիման դործո-
գութեամբ : Զոր օրինակ . զիստք թէ հարկաւոր է
խմանսղ 1000 սեկունդն որքան մինուտ պարունա-
կում է խր մէջ : Այս խնդրոյ վճիռն կծեւակերպոի
այսպէս :

| | | |
|---|---|---|
| $\begin{array}{r} 1000 \\ - 60 \\ \hline 400 \end{array}$ | $\begin{array}{r} 60 \\ \hline 16 \text{ մինուտ} \end{array}$ | $\begin{array}{r} 360 \\ \hline 40 \text{ սեկունդ} \end{array}$ |
| | | |

Ուստի 1000 սեկունդն պարունակում է խր մէջ 16
մինուտ եւ 40 սեկունդ :

Ստուգոթեան համար ալէտք է 16 մինուտն եւ
40 սեկունդն բերել շինել սեկունդ :

16 մինուտ 40 սեկոնդ :

$$\begin{array}{r}
 \times 60 \\
 \hline
 960 \text{ սեկոնդ} \\
 + 40 \text{ սեկոնդ} \\
 \hline
 1000 \text{ սեկոնդ} :
 \end{array}$$

Վերածման օրինակներ :

1. 1848 ժամի քանի օր սպառունակումէ խր մէջ :
2. Ռուսան ոռորդի սպառունակումէ խր մէջ 127,600 տոլուշկայն :
3. Ռուսան ֆունտ սպառունակում է խր մէջ 7287 լոտն :
4. Ռուսան ստոլայ եւ դաստայ սպառունակում է խր մէջ 247,627 լիտրն (թերթ թղթոյ) :
5. Ռուսան տարի սպառունակում է խր մէջ 1,000,000,000 սեկոնդն :
6. Ռուսան ոռորդի կայ 1276 կոռէկլի եւ 3 տոլուշկայի մէջ :
7. Դիցուք թէ՝ մարդոյ մէկը անց է կենում մէկ մինուտումը 110 արշին, խմացիք քանի վերստ անց կըկենայ այն մարդն 55 մինուտումը :
8. Մէկ զրբի մէջ կայ 277,200 տառ . խմացիք, որքան տպուած թերթ կայ այն զրբի մէջ, եթէ ամէն մէկ տօղն սպառունակումէ 35 տառ, ամէն մէկ

թղթի Նրեան պարանակում է 33 սով և տարած
ԺԵՐԺԻ 16 երես :

Պատաժնիաններ :

1. 77 օր :
2. 319 սուրլի :
3. 227 Գունս և 23 լոտ :
4. 515 սառպ , 17 դաստայ և 19 թերթ :
5. 31 տարի , 259 օր , 1 ժամ , 46 մինուտ և
40 սեկունդ :
6. 12 սուրլի , 76 կողեկ և 3 սլոլուշկայ :
7. 4 վերսու , 16 սաժեն և 2 արշին :
8. 15 թերթ :



Դրախ Բ.

Անտանոկան թիւերու յուերման վերայ :

(Օ ժօյքուս ստովառնախ ուսուէ) .

Դիցուք թէ պահանջուում է սւելայնել մի-
եանց վերայ թիւերն նախ 5 սուրլի 2 դրիվին 3 կո-
ղեկ 2 սլոլուշկայ , երկրորդ՝ 4 սուրլի , 7 դրիւին , 2

կօռէկ եւ 1 պօլուշկայ . Երբորդ՝ 9 ոռորի , 6 զրիսն
5 կօռէկ 1 պօլուշկայ :

Հեշտութեան համար նախ՝ տուած թիւերն սկառք
է զրել միմեանց տակը այնպէս , որ խրաքանչիւր
տեսակի միութիւններն զրտած լինին միմեանց դէ-
մուղեմ :

5 ոռորի 2 զրիսն 3 կօռէկ 1 պօլուշկայ

4 — 7 — 2 — 1 —

9 — 6 — 5 — 1 —

19 — 6 — » — 3

Եւ յիսոյ հաւաքել սկսեալ փոքրագոյն տեսակի թիւ-
երէն . այսինքն՝ պօլուշկայից :

1 պօլուշկայ եւ 1 պօլուշկայ կլինի 2 պօլուշկայ .
դարձեալ 1 պօլուշկայ՝ 3 պօլուշկայ . թիւն՝ 3 սկառք
է զրել պօլուշկայից տակը :

3 կօռէկ եւ 2 կօռէկ կլինի 5 կօռէկ . 5 կօռէկ եւ
5 կօռէկ կլինի 10 կօռէկ . բայց որովհետեւ 10 կօ-
ռէկն պարունակում է խր մէջ 1 զրիսն . նորա հա-
մար սկառք է կօռէկներու տակը դնել նշանս՝ „ , որ
կցուցանէ թէ՝ զումարի մէջ կօռէկներ չկան եւ մէկ
զրիսնը աւելացնել զրիսներու զումարի վերայ :

1 զրիսն եւ 2 զրիսն կլինի 3 զրիսն . 3 զրիսն
եւ 7 զրիսն՝ 10 զրիսն . 10 զրիսն եւ 6 զրիսն՝ 16
զրիսն կամ 1 ոռորի եւ 6 զրիսն . թիւն 6 սկառք է
զրել զրիսներու տակը , խել 1 ոռորին սպահել մըս-
քումը եւ տւելացնել ոռորիներու վերայ :

1 ոռորի եւ 5 ոռորի կլինի 6 ոռորի . 6 ոռորի

եւ 4 ոռորլի՝ 10 ոռորլի . 10 ոռորլի եւ 9 ոռորլի՝ 19 ոռորլի . թիսն 19 պէտք է զրել ոռորլերու տակը , ուստի որոնելի գումարն կլինի 19 ոռորլի , 6 զրիւխն եւ 3 ոլորտշիայ : Այս օրինակէն երեւոսմ է , որ այլաւելու թիւերու միմեանց վերայ տեղացնելու համար՝ պէտք է նախ՝ գումարելի թիւերն զրել միմեանց ներքոյ այնալէս , որ փոքրադոյն տեսակի թիւերն զըրուած լինին փոքրադոյն տեսակի թիւերու ներքոյ եւ վերջին գումարելի թուոյ տակը քաշել խաղ :

Երկրորդ՝ սկսանել հաւաքել փոքրադոյն տեսակի թիւերէն :

Երրորդ՝ եթէ ստացուի գումարն նուազ քան դյացորդ միութիւնն մեծադոյն տեսակի , զրել զայն գումարն փոքրադոյն տեսակի թիւերու ներքոյ :

Չորրորդ՝ եթէ ստացուի գումարն պարունակող յինքեան զմիութիւն մեծադոյն տեսակի՝ պէտք է հանել նորանից այս մեծադոյն տեսակի միութիւնն եւ տեղացնել յաջորդ մեծադոյն տեսակի միութիւններու վերայ . իսկ եթէ մնայ մնացորդ՝ զրել մի եւ նոյն փոքրադոյն տեսակի թիւերու ներքոյ :

Խնդիր . Խմ կրտսեր (փոքր) եղբայրս է 8 տարեկան , 3 ամսական եւ 5 օրուան . ևս նորանից մեծ եմ 2 տարով եւ 8 ամսով . մեր մեծ եղբայրն ինձանից մեծ է 3 տարով եւ 25 օրով . իսկ մեր հայրն 25 տարեկան էր , երբոր ծնաւ մեր մեծ եղբայրն . խմացիր , քանի տարեկան է հայրս

| | | | | | | | |
|-------|------|---|---|------|---|---|----|
| 8 | տարի | , | 3 | ամիս | , | 5 | օր |
| 2 | — | 8 | — | ,, | — | | |
| 3 | — | „ | — | 25 | — | | |
| 25 | — | „ | — | „ | — | | |
| <hr/> | | | | | | | |
| 39 | — | „ | — | „ | — | | |

Պատասխանի 39 տարեկան :

Անուանական թիւերու յաւելման օրինակներ

1. Աւելացն միմեանց վերայ հետեւեալ թիւերն

| | | | | | | | | | | | |
